# ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐՄԻՐՇԱԼՅԱՆ

**Ծննդյան թիվն ու վայրը՝**

1952թ. մարտի 2, Հայաստան, ք. Էջմիածին:

**Կրթությունը՝**

1989-1991թթ. - Մոսկվայի Դիվանագիտական ակադեմիա,

1974-1976թթ. - Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարան, ժուռնալիստիկայի ֆակուլտետ,

1970-1974թթ. - Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ, միջազգային ժուռնալիստիկայի ֆակուլտետ:

**Աշխատանքային գործունեությունը՝**

2013թ. - ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության պետ,

2012-2013թթ. - ՀՀ ԱԳՆ քարտուղարության աշխատակազմի խորհրդական,

2006-2012թթ. - Արգենտինայի Հանրապետությունում (համատեղության կարգով նաև Ուրուգվայում ու Չիլիում) Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան,

2000-2006թթ. - Շվեդիայում (համատեղության կարգով նաև Դանիայում, Նորվեգիայում և Ֆինլանդիայում) Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան,

1995-2000թթ. - ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակին կից Ժողովրդավարության և մարդու իրավունքների կենտրոնի գլխավոր տնօրեն: Միաժամանակ՝ ՀՀ նախագահին կից Մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ,

1994-1995թթ. - ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ,

1992-1994թթ. - ՀՀ ԱԳՆ Լատինական Ամերիկայի երկրների վարչության պետ,

1991-1992թթ. - ՀՀ ԱԳՆ առաջին քաղաքական վարչության պետ,

1985-1989թթ. – Դանանգում (Վիետնամ) ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսության հյուպատոս,

1978-1985թթ. - ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարի օգնական,

1977-1978թթ. - ՀԽՍՀ ԱԳՆ քաղաքական ինֆորմացիայի բաժնի երկրորդ քարտուղար,

1976-1977թթ. - «ՌԻԱ Նովոստի» լրատվական գործակալության հայաստանյան գրասենյակի, այնուհետև՝ «Արմենպրեսի» թղթակից:

**Դիվանագիտական աստիճանը՝**
արտակարգ և լիազոր դեսպան:

**Օտար լեզուների իմացությունը՝**
ռուսերեն, իսպաներեն և անգլերեն:

**Ընտանեկան կարգավիճակը՝**
ամուսնացած է, ունի որդի և դուստր:

*2019թ. ապրիլի 26-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Իսպանիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան:*